ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mails: info@yermetro.am

39/02-07-501 «24» 08 2020 թ.

Ձեր ՝ _____ առ «_____» _____ 202 թ.

«Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ռ.Վարդանովային

Հարգելի տիկին Վարդանովա

<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն> ՓԲԸ և «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ միջև 03.04.2020թ. կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով <Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն> ՓԲԸ ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-ժամանակացույցով նախատեսված ապրանք, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ամրագրված պահանջները և չի կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի համաձայն, Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն, <Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան>:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմաագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի

Ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով <Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն> ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ներկայացնում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև հրապարակվել է www gnumner.am ինտերնետային կայքում և առաջարկում եմ վճարել պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 99 700 /իննսունինը հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը՝ 7478 /յոթ հազար չորս հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ, <Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն> ՓԲԸ <Արարատբանկ> ՓԲԸ 1510003671520100 հաշվեհամարին:

Տնօրենի ժ/պ՝ Գ.Ավետիսյան

Կատարող՝ ԻԲ